1 *Ի թվի ՌՀԴ։ Ես՝ տր [Յո]-*
2 *վհաննէս առաջն[որ]-*
3 *դ Սանահնիս, քվերորդի [պար]-*
4 *ոնացն, շինեցի զմ[ատու]-*
5 *ռս, որք հանդչիք սմա գ[իս]*
6 *գյաղութս յիշե[ց]-*
7 *էք։*

Ծանոթություն.— *Քարն իր բնական տեղում չէ։ Հետագայում բերել հագցրել են այժմյան տեղում և աջ կողքը տաշելով, ամեն մի տողից մի քանի գիր ոչնչացրել են, որոնք բոլորն էլ մտքի զորությամբ վերականգնվում են առանց դժվարության։*

## 140. Տապանաքար գրասան ճեմքի առաջ, նախագավթի մեջ

*ԺԳ դար*

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Այս է հանգիստ*
2 *Մէլիքին*

## 141. Իրար կողքի երկու տապանաքար, նախորդի մոտին

*ԺԳ դար*

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Այս է հանգիստ Մամաին եւ մաւր իւր Շնոր-*
2 *որ ախկնա։*

Ծանոթություն.— *Արձանագրությունն առանց ընդհատվելու մի տապանաքարից շարունակվում է մյուսի վրա։*

## 142. Նույն նախագավթի մեջ, գրասան մուտքի մոտ, տապանաքարի վրա

*ԺԳ—ԺԴ դդ.*

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Այս է հան-*
2 *գիստ պարո(ն)*
3 *Բէկի Ջան(ին)։*
4 *Ած ողորմի ք-*
5 *եզ։ Թվ Չ.— —*

Ծանոթություն.— *Թվականի տասնավոր և միավոր գրերն անընթեռնելի են։*